

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 42/8

ք.Երևան

16 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ «Գուգո-Ավետ» ՍՊԸ-ի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

«Գուգո-Ավետ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ ընկերություն) տնօրենը հայտնում է, որ ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության կողմից 23.05.2018թ. կազմվել է արձանագրություն (Վ1/525/2018/ՓԿ), համաձայն որի «Գուգո-Ավետ» ՍՊԸ-ի հիմնադիր Մկրտիչ Գուրգենի Պողոսյանը միաժամանակ հանդիսանում է «Գրիգոր-Գուրգեն» ԱԿ-ի կանոնադրական կապիտալում 33,33% փայաբաժնի հիմնադիր: Միաժամանակ, 2018թ. հունվարի 8-ին կոոպերատիվի ընդհանուր ժողովին իր փայաբաժնից հրաժարվելու և կոոպերատիվի կազմից դուրս գալու դիմում է ներկայացվել, որն ընդունվել է հիմնադիրների կողմից: Այնուհետև, 2018թ. փետրվար ամսին գրանցվել է «Գուգո-Ավետ» ՍՊԸ-ն: Սակայն պետական ռեգիստրի Սիսիանի տարածքային բաժնում «Գրիգոր-Գուրգեն» կոոպերատիվի կանոնադրական կապիտալի փայատերերի փոփոխության գործընթացը որոշ պատճառներով ձգձգվել է մինչև մայիս ամիս, որի մասին բողոքաբերը տեղյակ չի եղել: Այժմ նշված գործընթացը պետական ռեգիստրում մայիս ամսին ավարտվել է և նա այլևս կոոպերատիվի անդամ չի հանդիսանում:

Ընկերության տնօրենը խնդրում է թույլ տալ 2018 թվականի աշխատանքային տարին շարունակել աշխատել շրջանառության հարկով, հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «Գուգո-Ավետ» ՍՊԸ-ն նորաբաց ընկերություն է, և բացման օրվանից ունեցել է ընդամենը 2 գործարք 582.0 հազ. դրամ ընդհանուր շրջանառությամբ: Ընդ որում, գործընկերների հետ արտադրանքի գները հաշվարկվել են շրջանառության հարկի տոկոսադրույքները հաշվի առնելով:

ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված արձանագրության մեջ նշված վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարի վերաբերյալ (116.4 հազ. դրամ) հայտնվում է, որ նույնիսկ այդ գործարքներից եկամուտ չի գոյացել, ինչպես նաև վերջին 2.5 ամսվա ընթացքում ընդհանրապես պատվեր չի ունեցել: Չնայած այդ հանգամանքին բոլոր հարկերը պարտաճանաչ վճարվել են:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 44-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջները ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային

տեսչություն-վարչության կողմից «Գուգո-Ավետ» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցում (հաշվառում) իրականացնող մարմնի կողմից ստացված տեղեկությունների հետ վերջինիս ծանոթացնելու, համապատասխան բացատրություններ ներկայացնելու համար:

Ընկերության կանոնադրական կապիտալում 02.02.2018թ. 100% փայաբաժին ունեցող Մկրտիչ Գուրգենի Պողոսյանը միաժամանակ հանդիսացել է հիմնադիր 33.33% մասնաբաժնով «ԳՐԻԳՈՐ-ԳՈՒՐԳԵՆ» Ա/Կ-ում /ՀՎՀՀ 09805964/ 21.07.2011թ.-ից:

Ղեկավարվելով Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 254-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի, 255-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով հարկ վճարողին տեղեկացվել է, որ վերջինիս կողմից հարկային մարմին վերոնշյալ հայտարարությունը դեռևս չի ներկայացվել, և առաջարկվել սահմանված ժամկետում ներկայացնել հայտարարություն՝ նշելով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու համապատասխան հիմքը և օրը, որի արդյունքում Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ 02.02.2018թ. մինչև սույն հարկային տարվա ավարտը վերջինս կհամարվի ավելացված արժեքի հարկ վճարող:

Այնուհետև 23.05.2018թ. ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության կողմից կազմվել է արդեն կամերալ արձանագրություն, որտեղ ուսումնասիրության է ենթարկվել ընկերության 2018թ. 1-ին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը: Արդյունքում արձանագրվել է հետևյալը.

«Գուգո-Ավետ» ՍՊԸ-ն 2018թ. ընթացքում չէր կարող համարվել շրջանառության հարկ վճարող, հետևաբար հիմք ընդունելով 2018թ. 1-ին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկում արտացոլած շրջանառությունը, նշված ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ն կկազմի շուրջ 116.400 ՀՀ դրամ:

Առաջարկվել էր հարկ վճարողին 5 աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների հետ համաձայնելու դեպքում ներկայացնել ճշտված հարկային հաշվարկ(ներ), իսկ չհամաձայնելու դեպքում՝ ներկայացնել գրավոր առարկություններ կամ հիմնավորումներ:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

Հիմք ընդունելով Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձիք համարվում են փոխկապակցված, եթե ռեզիդենտ առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնետեղաբաժնի) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է այլ ռեզիդենտ առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնետեղաբաժնի) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը): Համաձայն Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի՝ շրջանառության հարկ վճարող չեն կարող համարվել Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները: Համաձայն Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ շրջանառության հարկ վճարողը դադարում է այդպիսին համարվելուց, եթե տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 5-րդ կամ 7-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը՝ այդ փաստը տեղի ունենալու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը: Համաձայն Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու հիմքերից որևէ մեկը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկ վճարողը հարկային մարմին է

ներկայացնում հայտարարություն՝ նշելով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու համապատասխան հիմքը և օրը:

Քննարկվող դեպքում Ընկերության կանոնադրական կապիտալում 02.02.2018թ. 100% փայաբաժին ունեցող Մկրտիչ Գուրգենի Պողոսյանը միաժամանակ հանդիսացել է հիմնադիր 33.33% մասնաբաժնով «ԳՐԻԳՈՐ-ԳՈՒՐԳԵՆ» Ա/Կ-ում:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Գուգո-Ավետ» ՍՊԸ-ն 2018թ. ընթացքում չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ «Գուգո-Ավետ» ՍՊԸ-ի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վերջնական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ